ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/35457-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-643-01.08.2023-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Դատավորների վարձատրության կարգավորումները ներդաշնակեցնելու նպատակով առաջարկվում է՝

1. Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի» բառերից առաջ լրացնել «վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի,» բառերը:

2. Նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով, որով սահմանվում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի դատավորներին, ինչպես ներկայումս գործող օրենքով հակակոռուպցիոն դատարանի դատավորներին, արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում: Ուստի առաջարկվում է Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Օրենքի 8-րդ հոդվածի 3.1-ին մասում «Դատախազին» բառից առաջ լրացնել «Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի դատավորներին,» բառերով:»:

3. Նախագծի 3-րդ հոդվածը (խմբագրության արդյունքում Հոդված 4) վերախմբագրել և լրացնել նոր կետով, որի համաձայն գործող օրենքի 13-րդ հոդվածը լրացվում է նոր 6.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի դատավորներին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ